ՀՀԿԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**2021**

# Բովանդակություն

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ ..... 3
2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ ..... 26
3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ ..... 44

## 1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2020 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ Առաջին (ՀՀ տարածքում և Արցախում) և միջազգային (ՀՀ տարածքում և տարածքից դուրս) ալիքներով:

2020 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել է տարբեր թեմատիկ ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարելու հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները և ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

**Հեռուստահաղորդումների պատրաստում**

Հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում 2020 թվականի օգոստոսի 7-ից առաջնորդվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով (նախկինում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք), իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2020 թվականի ընթացքում Առաջին և միջազգային ալիքներից յուրաքանչյուրի եթերում հեռարձակվել են 8 778 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

**Աղյուսակ 1**

**2020 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների**

| Հ/Հ | Հաղորդումների թեմատիկ ուղղությունները | Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ) | Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ) |
|---|---|---|---|
| 1 | Լրատվական, լրատվական-վերլուծական | 1 186.1 | 1 447.2 |
| 2 | Քաղաքական, տնտեսական, հասարակական | 1 857.4 | 1 779.4 |
| 3 | Մշակութային | 1 944.2 | 1 454.5 |
| 4 | Կրթական, մանկապատանեկան | 660.6 | 523.0 |
| 5 | Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության | 965.0 | 1 199.2 |

| Հ/Հ | Հաղորդումների թեմատիկ ուղղությունները | Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ) | Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ) |
|---|---|---|---|
| 6 | Մարզական | 111.0 | 86.9 |
| 7 | Երաժշտական | 454.4 | 555.0 |
| 8 | Զվարճալի - ժամանցային | 1 342.6 | 1 593.5 |
| 9 | Հոլովակներ, այլ հաղորդումներ | 256.7 | 139.3 |
| | **Ընդամենը** | **8 778.0** | **8 778.0** |

Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 1-ում և Գծապատկեր 2-ում:




**Գծապատկեր 1. 2020 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)**




**Գծապատկեր 2. 2020 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)**

**<u>Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ</u>**

**«Լուրեր. 60 րոպե»**

Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության կողմից աշխատանքային օրերին օրական հինգ անգամ հեռարձակվել են լրատվական թողարկումներ, իսկ երեկոյան՝ լուրերը ամփոփվել և ներկայացվել են «Լուրեր. 60 րոպե» լրատվական հաղորդմամբ: Լրատվական թողարկումների ընթացքում համակողմանիորեն լուսաբանվել են Հայաստանում, Արցախում և աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները: Լրատվական ծառայությունը օպերատիվ աշխատանքն իրականացրել է ինչպես Երևանում տեղակայված կենտրոնակայանի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Եվրոպայի մի շարք պետություններում, Մերձավոր Արևելքում և այլ երկրներում գործող թղթակցական կետերի միջոցով, որոնք ապահովել են անաչառ և օպերատիվ լրահոս:

2020 թվականին պատերազմական գործողությունների ընթացքում Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայությունն աշխատել է 24-ժամյա հերթափոխով՝ յուրաքանչյուր ժամ ապահովելով թարմ լրահոս:

**«Կիրակնօրյա ամփոփիչ լուրեր»**

Կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրադարձությունները: Բացառիկ ռեպորտաժներով լուսաբանվում են լրատվությամբ ողջ խորությամբ չմեկնաբանված կամ լրահոսից դուրս մնացած սուր անկյունները: Դրանք վերաբերում են այն իրադարձություններին, որոնք ամբողջ շաբաթ եղել են Հայաստանի ու աշխարհի ուշադրության կենտրոնում, և այն երևույթներին, որոնք այդ օրերին գուցեև բավականաչափ արդիական չեն եղել, սակայն կարևոր են հանրային կյանքում իրենց նշանակությամբ:

**«Խորհրդարան»**

Հաղորդաշարը շարժական կայանի օգնությամբ տեսագրում և եթեր է հեռարձակում ՀՀ Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքը, որտեղ պատգամավորները և խումբ-խմբակցություններն իրենց հատկացված ժամանակահատվածում հանդես են գալիս հայտարարություններով, բարձրացնում սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ հարցեր:

**<u>Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ</u>**

**«Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ»**

Հարցազրույցի ձևաչափով Պետրոս Ղազարյանի հեղինակային հաղորդման հյուրերն են պետական, հասարակական, մշակութային ոլորտների ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա տարբեր գործիչներ, որոնց հետ լայնորեն քննարկվում են Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների կարևոր ու հրատապ տարբեր թեմաներ:

**«Հանրային քննարկում»**

Յուրաքանչյուր կիրակի Հանրային հեռուստաընկերությունը հնարավորություն է տալիս հեռուստադիտողին ականատես լինելու ներքաղաքական ամենաթեժ քննարկումներին: Հաղորդումը քննարկում է շաբաթվա կարևորագույն քաղաքական, սպորտային, տնտեսական, սոցիալական իրադարձությունները: Ամենատարբեր մասնագիտություններ ունեցող հյուրերի շնորհիվ ապահովվում է բազմակարծություն արծարծվող թեմայի շուրջ:

**«Խաղի կանոններ»**

Հանրային հեռուստաընկերությունը բանավեճի միջոցով հեռուստադիտողին է ներկայացնում հասարակության կողմից առավել սուր արձագանք ստացած հարցերը՝ ներկայացնելով չորս իրարամերժ տեսակետներ: Յուրաքանչյուր կողմը փորձում է

փաստարկներով ներկայացնել և պաշտպանել սեփական կարծիքը և գաղափարները: Այս ձևաչափն առավել մատչելի է դարձնում քննարկվող խնդիրը և նրա լուծումները:

**«Զինուժ»**

Շաբաթական երկու անգամ Հանրային հեռուստաընկերության եթերում է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչության «Զինուժ» ծրագիրը, որը ներկայացնում է բանակի շաբաթվա առօրյան, միջազգային ռազմաքաղաքական շփումները. մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար փոխհարաբերություններ, պատմամշակութային նյութեր, ինչպես նաև անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն:

**«Խորհրդարանական շաբաթ»**

Ազգային ժողովի լրատվական ծառայության կողմից պատրաստվող հաղորդաշարը Հանրային հեռուստաընկերության եթերում յուրաքանչյուր շաբաթ լուսաբանում է խորհրդարանի աշխատանքը: Հաղորդման ընթացքում խորհրդարանական խմբերն ու խմբակցությունները կանոնակարգված ժամանակահատվածում լայն հանրության համար բարձրաձայնում են իրենց համար տեսանելի խնդիրներն ու առաջարկությունները:

**«Հրապարակում»**

Հաղորդաշարը լուսաբանում է ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարության ընդունած կարևորագույն որոշումների, քննարկումների մասին: Հաղորդաշարը միաժամանակ ներկայացնում է գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

**«02»**

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության «02» հաղորդաշարի գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա: Այս հաղորդաշարը նպաստում է հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, ներկայացնում է օպերատիվ նկարահանումներ դեպքի վայրից, հանցագործությունների բացահայտումներ, օպերատիվ հետախուզական և քննչական միջոցառումների իրական դեպքեր, շաբաթվա քրեական քրոնիկոնը, առանձին հանցատեսակներով թեմատիկ հաղորդումներ, մասնագիտական

վերլուծություններ և եզրակացություններ, ինչպես նաև պաշտոնական հանդիպումներ, այցեր, միջոցառումներ և տեսակետներ լուսաբանող ռեպորտաժներ:

**«Առավոտ լուսո»**

Յուրաքանչյուր աշխատանքային օր Առաջին ալիքի առավոտյան եթերը մեկնարկում է «Առավոտ լուսո» հաղորդաշարով. այստեղ առկա են միանգամից մի քանի ժանրեր՝ հարցազրույց, սյուժե, ակնարկ, լրատվություն, ռեպորտաժ: Հաղորդաշարի նպատակն է հեռուստադիտողին հաղորդել օրվա ռիթմը, հետաքրքիր տեղեկություններ օրվա հասարակական և մշակութային անցուդարձի վերաբերյալ, ինչպես նաև բազմազան թեմաների շուրջ ունենալ հետաքրքիր հարցազրույցներ տարբեր ոլորտների ճանաչված մարդկանց հետ:

**«Ինդեքս»**

Աշխատանքային օրերին հեռարձակվող «Ինդեքս» լրատվական հաղորդաշարը լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և ամբողջ աշխարհում տեղի ունեցած տնտեսական ոլորտի իրադարձությունները:

**«Եկեք հասկանանք»**

Թոք-շոուի ձևաչափով այս հաղորդաշարը առանց սահմանափակումների անդրադառնում է տարբեր ոլորտներին վերաբերող ամենատարբեր թեմաներին, ինչը արդիական է և հուզում է հասարակությանը: Հաղորդաշարը հասարակական հնչեղություն է հաղորդում կարևորագույն հարցերին՝ իրականացնելով բազմակողմանի քննարկումներ և փորձելով տալ պատասխաններ: Հաղորդաշարի ընթացքում հաղորդավարները և հրավիրյալ մասնագետները փորձում են միասին գտնել ամենաօպտիմալ ելքը ստեղծված իրավիճակից:

**«Կեսգիշերն անց»**

Հաղորդաշարի շրջանակներում տարբեր բնագավառների ներկայացուցիչներ անկեղծորեն կիսվում են իրենց մասնագիտական գործունեության և անձնական կենսափորձի մասին: Պատասխանելով հաղորդավարական դուետի ամենաանսպասելի հարցերին՝ հաղորդաշարի հյուրերը հեռուստադիտողին ներկայանում են անհատական հատկանիշներով ՝ ավելի ազատ, անկեղծ և բնական:

**«Նվիրյալներ»**

Հաղորդաշարը հաղթանակների և հաղթողների մասին է ու նվիրված է Արցախյան գոյամարտին և նրա հերոս մասնակիցներին՝ զինվորից մինչև գեներալ: Հեռուստադիտողին

ներկայացվում է ոչ միայն ազատամարտիկի, զինվորի ու հրամանատարի ճանապարհը, այլ նաև պատերազմում բժիշկների, հոգևորականների ու այլ մարդկանց ունեցած կարևոր ներդրումը: Հաղորդաշարի հերոսներն են այն մարդիկ, ովքեր չվախեցան կռվել ու մեռնել հանուն հայրենիքի: Կան հազվագյուտ դրվագներ մարտերից, որոնց մասին հիշում ու պատմում են ականատեսները: Մեր հերոսների պատմությունները բացահայտում են պատերազմում դրսևորած քաջության, խիզախության և հայրենասիրության լավագույն հատկանիշները, որոնք հաղթանակի կերտման ամենակարևոր գործոններից են:

Նկարահանումները կատարվում են Արցախում և Հայաստանում: Ճակատամարտերի և հերոսների մասին է պատմում վավերագրող Ցվետանա Պասկալևան:

**«Սպասիր ինձ»**

Մասշտաբային հեռուստանախագիծ, որը յուրահատուկ միջոցներով հեռուստադիտողին թույլ է տալիս հաղորդակից լինել մարդկային ճակատագրերին ու պատմություններին: Յուրաքանչյուր շաբաթ հեռուստադիտողը ականատես է լինում անհավանական մարդկային ճակատագրերի և պատմությունների: Տարիների պատմություն ունեցող այս հաղորդաշարը անտարբեր չի թողնի որևէ մեկին՝ խորհրդավոր պատմություններ, անարդյունք որոնումներ և, վերջապես, դրամատիկ հանգուցալուծում:

**«Մեկ պատուհան»**

«Մեկ պատուհան» հեռուստանախագծի նպատակն է բարձրացնել մարդկանց իրավագիտակցությունը, օգնել կողմնորոշվել իրավական դաշտում և խնդիրները լուծել օրենքի ուժով: Հաղորդաշարի ընթացքում փորձառու իրավաբանների կողմից խորհուրդներ և հնարավոր լուծումների ճանապարհներ են տրվում խնդրի առջև կանգնած անձանց՝ սեփականության և հեղինակային իրավունքի, ժառանգության կամ իրավական այլ հարցերի շուրջ:

**«Եթե բոլորը»**

Հեռուստանախագծի նպատակն է բարձրացնել հասարակության սոցիալական պատասխանատվության զգացումը այն ընտանիքների և երեխաների նկատմամբ, որոնք ապրում են մեր կողքին և ունեն մեր օգնության կարիքը: Յուրաքանչյուր հաղորդում ներկայացնում է մի երեխայի պատմություն, ում ճակատագիրը կարող է փոխվել հեռուստադիտողի բարեգործության շնորհիվ: Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկման ընթացքում հայտարարված դրամահավաքի արդյունքում հավաքագրված գումարներն ուղղվում են հաղորդաշարի մասնակից երեխաների բուժմանը: Հաղորդաշարը կոչված է

ապացուցելու, որ հասարակությունը համախմբվելով կարող է փոխել իրականությունը, և բուժում ստացած երեխաների օրինակները այդ փոխված իրականության վառ ապացույցներն են:

**«Ուսուցիչը»**

Հաղորդաշարի հերոսներն ուսուցիչներ են: Հայաստանի տարբեր մարզերում և գյուղերում աշխատող անձնվեր մարդկանց մասին պատմող հաղորդաշարը ներկայացնում է մեր կողքին ապրող իրական հերոսներին: Ուսուցիչներ, որոնք ամեն օր ջանք և եռանդ չեն խնայում կրթելու, պայքարելու և փոքր քայլելով մեծ փոփոխություններ անելու համար:

**«Մեդիա դիտորդ»**

Հանրային հեռուստաընկերությունը՝ Երևանի մամուլի ակումբի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Լրատվամիջոցների էթիկայի դիտորդ մարմնի հետ համատեղ, իրականացնում է նախագիծ, որը երկխոսության հարթակ է տրամադրում մեդիայի ներկայացուցիչներին՝ քննարկելու մասնագիտական ու էթիկային վերաբերող թեմաներ, լրագրողի և հանրության հարաբերությունների գրված ու չգրված կանոններ, խմբագրական բարդ որոշումներ և դրանցից բխող հետևանքներ: Հաղորդաշարի նպատակն է բարձրացնել հանրության մեդիագրագիտությունը:

**«Իմ գործը»**

Ֆիլմաշարի հիմնական նպատակն է ցույց տալ Հայաստանի գյուղական շրջաններում զարգացող բիզնեսները, դրանց առանձնահատկություններն ու կոլորիտը: Հաղորդման ընթացքում հեռուստադիտողին ներկայացվում են ժամանակակից բիզնեսի յուրահատկությունները, կիրառվող նորարարություններն ու ստեղծման պատմությունները. ինչ խնդիրների են բախվում մեր հերոսները, ինչպես են դիմակայում մարտահրավերներին և այլն: Ֆիլմաշարի ընթացքում ուրվագծվում է ժամանակակից Հայաստանի հաջողակ ագրոբիզնեսմենի կերպարը:

**«Սահմանապահ գյուղեր»**

Նախագծի պատմությունները վերաբերում են Հայաստանի բոլոր հարևան պետությունների հետ սահմանակից հայկական գյուղերին և ուղղված են բացահայտելու, թե աշխարհագրական սահմանագիծը որքանով է ազդում տվյալ տարածքում ապրող մարդկանց ապրելակերպի և աշխարհայացքի ձևավորման վրա:

**«Կամքի ուժը»**

Հաղորդաշարը պատմում է հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին, ովքեր իրենց մեջ ոտքի կանգնելու ուժ են գտել: Նրանք աշխատում և ստեղծագործում են, զբաղվում են սպորտով: Նրանցից ոմանք միջազգային մրցումների մեդալակիրներ են, անգամ ունեն իրենց սեփական կազմակերպություններն ու արվեստանոցները: Հաշմանդամությունը չի խանգարում նրանց ապրել, արարել և հասնել սեփական նպատակներին:

**«Առաջին օգնություն»**

Առողջապահական հաղորդում, որում խոսվում է հիվանդությունների, դրանց ախտորոշման, կանխարգելման և բուժման մեթոդների մասին: Հաղորդման նպատակն է հանրության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը, բժշկին դիմելու կարևորության գիտակցման բարձրացումը և հիվանդությունների ու դրանց բուժման մեթոդների մասին տեղեկատվության տրամադրումը:

**«Երևան»**

Երևանի քաղաքապետարանի կողմից պատրաստվող հաղորդաշարը լուսաբանում է Երևանի քաղաքապետարանի գործունեությունը. ներկայացվում են վերջինիս ենթակայությամբ գործող կառույցների աշխատանքները, տարբեր ոլորտներում առկա խնդիրները և դրանց լուծման ընթացքը, ինչպես նաև մանրամասներ քաղաքային տնտեսության կառավարման տարբեր ոլորտներից:

**«Մեր ժամանակի հերոսը»**

Հաղորդաշարի հերոսներից շատերը երիտասարդներ են, ովքեր իրենց աշխատանքով քայլ առ քայլ կերտել են լավատեսության հաղթանակը Հայաստանի Հանրապետությունում:

**<u>Մշակութային հաղորդումներ</u>**

**«Կտոր մը Հայաստան»**

Հաղորդումը ներկայացնում է պատմություններ այն մարդկանց մասին, ովքեր աշխարհի ցանկացած անկյունում ստեղծում, պահպանում ու փայփայում են Հայաստանի իրենց կտորը: Օտար երկրներում հայ մշակույթի, լեզվի և ավանդույթների պահպանման կարևորության և խոչընդոտների մասին հյուրերը պատմում են մենախոսության միջոցով՝ ներկայացնելով իրենց Հայաստանը:

**«Կողք կողքի»**

Հաղորդաշարի ընթացքում Առաջին ալիքն անդրադառնում է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին՝ ներկայացնելով նրանց կենսակերպն ու սովորույթները: Հաղորդաշարը պատմում է Հայաստանում ապրող տարբեր ազգերի համայնքային կյանքի, մշակույթի և ավանդույթների մասին: Ապրելով, աշխատելով և արարելով Հայաստանում՝ նրանք նպաստում են մեր երկրի տնտեսական զարգացմանը և մշակութային կյանքի հարստացմանը:

**«Հայրենեան»**

Հայագիտական, ճանաչողական, ազգագրական հենքով ֆիլմաշարը ներկայացնում է այն ամենը, ինչը հային դարձնում է հայ, Հայաստանն ու հայկականը՝ եզակի: Հաղորդման ընթացքում ներկայացվում են այն արժեքներն ու ավանդույթները, որոնք դարեր շարունակ կերտել են հայի կերպարն ու հայ մշակույթը: Հաղորդաշարը հնարավորություն է տալիս թե՛ տեղացիներին, թե՛ սփյուռքահայերին, թե՛ օտարերկրացիներին Հայաստանն ավելի լավ ճանաչել և հայկականը ավելի շատ գնահատել:

**«Թագակիրները»**

Հաղորդաշարը նվիրված է հայոց թագուհիներին: Այն հնարավորություն է տալիս հեռուստադիտողին ծանոթանալու հայոց թագուհիների և ազնվական կանանց կյանքի բոլոր կողմերին՝ կենցաղից մինչև հայրենիքի համար գործած սխրանքներ: Նախագիծը բացահայտում է Հայոց պատմության հանդիսավոր և գեղեցիկ դրվագները, որտեղ արժևորվում է հայ կնոջ կերպարը:

**«Չտեսնված կինո»**

«Չտեսնված կինո» նոր հաղորդաշարը հեռուստադիտողին է ներկայացնում հետխորհրդային արտադրության հայկական ֆիլմեր, որոնք ուղեկցվում են ոլորտի մասնագետների հետ քննարկումներով: Հաղորդաշարը ոչ միայն ծանոթացնում է հեռուստադիտողին հայկական կինոժառանգությանը, այլև օգնում հասկանալ գեղարվեստի լեզուն:

**«5 րոպե արվեստ»**

Հաղորդաշարը պատմում է Հայաստանում ապրող և ստեղծագործող արվեստագետների մասին: Մեր կողքին ստեղծագործող բազմաժանր արվեստագետները պատմում են արվեստն ընտրելու, ստեղծագործելու, արվեստում ունեցած սկզբունքների մասին: Նախագծի առաքելությունն է վավերագրել մեր ժամանակներում ապրող ու

ստեղծագործող անհատներին, զարգացնել հեռուստադիտողի գեղագիտական ճաշակն ու հաղորդակից դարձնել արվեստին:

**«Առանց թեմայի»**

Հրաչուհի Ութմազյանի հետ մտերմիկ զրույցում ներկայանում են մշակութային ոլորտի տարբեր գործիչներ: Ծավալվում են բազմաբովանդակ ու հետաքրքիր զրույցներ ամենատարբեր թեմաների շուրջ:

**«Հեռուստաթատրոնի արխիվ»**

Սույն խորագրի ներքո ցուցադրվում են տարբեր տարիների ինչպես ճանաչված ու սիրված, այնպես էլ նախկինում չհեռարձակված հեռուստաներկայացումները:

**«Հեռուստաթատրոն 2020»**

Հեռուստանախագիծը բաղկացած է 16 մասերից, որոնց ընթացքում բեմադրվել և նկարահանվել են Հակոբ Պարոնյանի, Ստեփան Զորյանի և Սերո Խանզադյանի ստեղծագործությունները: Յուրաքանչյուր մաս հիմնված է մեկ ստեղծագործության վրա: Նախագծի նպատակն է հանրության շրջանում բարձրացնել հետաքրքրությունը դեպի թատրոն և ներկայացնել հայ գրողների ստեղծագործությունները:

**«Մշակութային ազդագիր»**

Լրատվական մշակութային հաղորդաշար, որը ներկայացնում է հանրապետության պատկերասրահներում, ցուցահանդեսներում, գրատներում, թանգարաններում և մշակութային այլ հաստատություններում տեղի ունեցող ստեղծագործական ու հոբելյանական միջոցառումները:

**Ֆիլմեր և մշակութային այլ հաղորդումներ**

2020 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել հայրենական և արտասահմանյան հայտնի կինոարտադրող ընկերությունների արտադրության թե՛ արդեն սիրված և թե՛ ժամանակակից գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր, հայ գրողների ստեղծագործությունների մոտիվներով նկարահանված բազմասերիանոց հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմեր («Պատվի համար», «Անատոլիական պատմություն» և այլն), ինչպես նաև լուսաբանել մշակութային տարաբնույթ միջոցառումներ և փառատոններ («Ոսկե ծիրան», Կաննի կինոփառատոն, ամերիկյան կինոակադեմիայի ամենամյա Օսկար մրցանակաբաշխություն, ցուցահանդեսներ, ազգային մրցանակաբաշխություններ, տարբեր ոլորտների հայ անվանի գործիչների հոբելյանական երեկոներ, փառատոններ և նշանակալի մշակութային այլ

միջոցառումներ):

**<u>Կրթական, մանկապատանեկան հաղորդումներ</u>**

**«Դու գիտես»**

Ինտելեկտուալ հաղորդաշարի շրջանակներում հեռուստադիտողը ականատես է լինում, թե ինչպես են Երևանի և հանրապետության բոլոր մարզերի ու Արցախի դպրոցներում սովորող երեխաները դրսևորում իրենց գիտելիքները: Նախագծի նպատակն է խրախուսել լավագույն աշակերտներին, բարձրացնել դպրոցի և ուսուցչի դերն ու նշանակությունը:

**«Հանրային դաս»**

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված յուրաքանչյուր աշխատանքային օր աշակերտների համար Հանրային հեռուստաընկերության եթերում կազմակերպվել են հեռավար դասեր: Նախագծի նպատակն է եղել հեռավար կրթության միջոցով դպրոցականներին մոտ պահել ուսումնական գործընթացին: Հեռավար դասերին մասնակցելու համար կրթական գերատեսչությունը հրավիրել է հեղինակավոր մասնագետներ ու փորձառու ուսուցիչներ: Դասարանային դասերին զուգահեռ իրականացվել են նաև ֆիզիկական կուլտուրայի դասեր: Տան պայմաններում աշակերտները մարզվելու հնարավորություն են ունեցել՝ հետևելով մարզիչների խորհուրդներին և դասերին:

**«Դասերից հետո»**

Հաղորդաշարի ընթացքում երեխաները ստանում են հետաքրքիր տեղեկատվություն, ծանոթանում հայկական արվեստին ու մշակույթին, ճանաչում հայ մեծերին, տեղեկանում են SS աշխարհի նորություններին, ինչպես նաև գտնում իրենց հուզող մի շարք հարցերի պատասխաններ:

**«Դասարան+դասական»**

«Դասարան+դասական» պատանեկան հաղորդաշարը, որն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ, թատրոնի և թատերական արվեստի մասին է:

**Մուլտֆիլմեր և կրթական այլ հաղորդումներ**

2020 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել ինչպես արտասահմանյան հայտնի, այնպես էլ հայ դասական ու սիրված մուլտֆիլմեր:

**Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության հաղորդումներ**

**«Արվեստը և իրականությունը»**

Հաղորդաշարը փորձում է բացահայտել արվեստի բազմաբովանդակ աշխարհը՝ անդրադառնալով նրա տարբեր ոլորտներին: Տվյալ ոլորտի մասնագետների հետ ունեցած հարցազրույցների միջոցով հեռուստադիտողը հնարավորություն է ստանում մասնագիտական տեսանկյունից ավելի խորը ուսումնասիրել արվեստը:

**«Հայաստանի ճամփեքով»**

Հաղորդաշարը հայրենաճանաչության յուրօրինակ հեռուստադաս է, որը լսարանի ուշադրությունն է հրավիրում մեր հայրենիքի նյութական և մարդկային հարստության վրա, ձևավորում պատասխանատու վերաբերմունք սեփական մշակութային ժառանգության նկատմամբ: Հաղորդաշարի նպատակն է Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների, մշակութային ժառանգության և ականավոր մարդկանց հանրահռչակումը:

**«Օտար, ամայի ճամփեքի վրա»**

Հաղորդաշարը յուրատեսակ հեռուստատեսային նախագիծ է, որը հեռուստադիտողին ուղեկցում է աշխարհի զանազան երկրներով ու քաղաքներով: Այս հեռուստանախագիծը հնարավորություն է տալիս ոչ միայն ճանաչելու աշխարհի պատմաճարտարապետական հուշարձաններն ու տեսնելու տեսարժան վայրերը, այլև ծանոթանալու համաշխարհային քաղաքակրթության մշակութային առանձնահատկություններին: Հաղորդաշարը նպատակ ունի յուրաքանչյուր արտասահմանյան ճամփորդության ժամանակ հեռուստադիտողին ներկայացնելու տեղի հայ համայնքը և վերջինիս ունեցած ավանդը տվյալ երկրի մշակութային և տնտեսական կյանքում:

**«Բացահայտիր Հայաստանը»**

Հաղորդաշարի շրջանակներում ներկայացվում են երկրի բնակավայրերը, պատմամշակութային կոթողները, եկեղեցիներն ու վանքերը, զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող վայրերը: Հաղորդաշարի նպատակն է բացահայտել կոնկրետ մշակութային հաստատության, հուշարձանի կամ հանրահայտ մեկ այլ վայրի պատմությունը, նշանակությունը, արտացոլումը ազգային մշակույթում, ներկայացնել այն որպես տուրիստական նշանակություն ունեցող վայր, հեռուստադիտողին տրամադրել դրա հետ կապված ուշագրավ տեղեկություններ, փաստեր կամ լեգենդներ: Հաղորդաշարն ընդգրկում է նաև Արցախի հոգևոր ու մշակութային կոթողները, հարուստ բնությունն ու

հետաքրքիր պատմությունը, հերոսական անցյալով վաստակած ներկան, ազգային սովորույթները, ավանդական խոհանոցն ու հայտնի արցախցիներին:

**«Մերոնք»**

Հաղորդումը պատմում է աշխարհի տարբեր երկրներում ապրող ու գործունեություն ծավալող հայերի մասին, ովքեր իրենց աշխատանքով մեծ համբավ են բերում Հայաստանին: Անդրադարձ է կատարվում աշխարհի տարբեր երկրներում ձևավորված հայկական համայնքներին, որոնք, հավատարիմ մնալով իրենց առաքելությանը, համախմբում են հայերին: Հաղորդման շրջանակներում ներկայացվում են նաև Հայաստան վերադարձած սփյուռքահայերը, ովքեր իրենց գործունեությամբ նախընտրում են շենացնել հայրենի երկիրը: Անդրադարձ է կատարվում նաև հայաստանյան կատարողներին, համույթներին ու թատերախմբերին, որոնք ելույթներով հանդես են գալիս արտերկրում և ավելի ճանաչելի դարձնում Հայաստանը:

**«Մեր արխիվը»**

Տասնամյակներ շարունակ Հանրային հեռուստաընկերությունը, իր ամենօրյա եթերները պահպանելով, ստեղծել և շարունակում է հարստացնել իր արխիվը: Արխիվացված ցանկացած պատկեր ժամանակի ընթացքում, որքան ներկայից հեռանում է, այնքան դառնում է ավելի հետաքրքիր, իսկ փորձառու հաղորդավարի մեկնաբանությունները, ուղեկցվելով արխիվային ուշագրավ կադրերով, էլ ավելի պատկերավոր են դարձնում հաղորդումը:

**«Մունք»**

«Մունք» վավերագրական հաղորդաշարն անդրադառնում է Արցախի կյանքի ամենատարբեր բաղադրիչներին՝ քաղաքաշինություն, ընտանիք, արդյունաբերություն, բանակ, խոհանոց, կրթություն, երիտասարդություն, զբոսաշրջություն և այլն:

**«Համատես Ավետարաններ»**

Տեր Ռուբեն վարդապետ Զարգարյանը ներկայացնում է Համատես Ավետարաններում առկա տարբերությունները, ներկայացնում դրանց մեկնությունները և համեմատական վերլուծությունները:

**«Շաբաթը եկեղեցու կյանքում»**

Հաղորդաշարում ներկայացվում են 2000 թվականից հետո Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կյանքում տեղի ունեցած կարևոր դեպքերն ու իրադարձությունները:

**Փաստավավերագրական ֆիլմեր**

2020 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստվել և հեռարձակվել են տարբեր ոլորտներում նշանակալի ներդրում ունեցող մեծանուն հայ գործիչների կյանքի ու գործունեության մասին պատմող փաստավավերագրական ֆիլմեր:

**Մարզական հաղորդումներ**

**«Մանկական լիգա»**

Նախագծի ընթացքում տարբեր շարժախաղերի և էստաֆետային մրցումների շրջանակներում միմյանց հետ մրցում են ՀՀ մարզերից, Երևանից և Արցախից ժամանած դպրոցականներ: Նախագծի նպատակն է դեռահասների շրջանում հետաքրքրություն առաջացնել սպորտի ու առողջ ապրելակերպի նկատմամբ, ինչպես նաև նպաստել մարզային դպրոցների միջև կամուրջների ու ընկերական հարաբերությունների ստեղծմանը:

**«Ճանապարհ դեպի Տոկիո»**

Ամառային Օլիմպիական 32-րդ խաղերին ընդառաջ «Ճանապարհ դեպի Տոկիո 2020» հաղորդաշարը հեռուստադիտողին է ներկայացրել Օլիմպիական խաղերի, մարզաձևերի և մեր մասնակիցների մասին պատմող պատմություններ, ռեպորտաժներ և հարցազրույցներ:

**«Մեր ֆուտբոլը»**

«Մեր ֆուտբոլը» հաղորդաշարը Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի 9 ակումբների մասին է. յուրաքանչյուր հաղորդում նվիրված է մեկ ակումբի: Հաղորդաշարը պատմում է ակումբների անցած ճանապարհի, ձեռքբերումների, աստեղային ժամերի ու առաջիկա նպատակների մասին: Հաղորդաշարը անդրադառնում է նաև Հայաստանի մանկապատանեկան ֆուտբոլին և ընթացիկ առաջնությանը:

**Մարզական այլ հաղորդումներ**

2020 թվականը հարուստ չի եղել սպորտային իրադարձություններով՝ հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի հետևանքով ստեղծված արտակարգ դրությունը և երկրների միջև փակ սահմանները: Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել են 2020 թվականի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը և այլ սպորտային հաղորդաշարեր, իսկ 2020 թվականին նախատեսված ամառային օլիմպիական խաղերը տեղափոխվել են 2021 թվական:

**<u>Երաժշտական հաղորդումներ</u>**

**«Արտակարգ համերգ»**

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում Հանրային հեռուստաընկերությունը պատրաստել և հեռարձակել է «Արտակարգ համերգ» երաժշտական ծրագիրը, որի շրջանակներում տարբեր երգիչներ ու երաժշտախմբեր ներկայացրել են իրենց հայտնի երաժշտական ստեղծագործությունները:

**«Երաժշտական փոստարկղ»**

Հաղորդաշարը հեռուստադիտողին հնարավորություն է տալիս իր ուղարկած նամակների միջոցով պատվիրել և ունկնդրել սիրելի կատարումները: Սուսաննա Շահինյանի մեկնաբանությամբ այս հաղորդաշարը ամենաերկարատևն է Հանրային հեռուստաընկերության եթերում և չի դադարում Հայաստանի մարզերում լինել ամենադիտվող ծրագրերից մեկը: Հաղորդումների ընթացքում մատուցվում են բազմազան ու բազմաժանր երգեր՝ դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադա, հեղինակային և շատ ու շատ հին ու նոր ստեղծագործություններ:

**«Դեպի Եվրատեսիլ»**

Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է «Դեպի Եվրատեսիլ» երաժշտական մրցութային ծրագիրը, որտեղ յուրաքանչյուր մասնակից հնարավորություն է ունեցել հարթել իր ճանապարհը դեպի հեղինակավոր «Եվրատեսիլ» երգի մրցույթ:

**«Ամանորի դասական համերգ»**

2020 թվականին Հանրային հեռուստաընկերությունը յուրաքանչյուր տարվա ամանորի տոնական - զվարճալի հաղորդում - ֆիլմի փոխարեն ներկայացրեց Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի մասնակցությամբ և դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ 90 րոպե տևողությամբ դասական համերգ՝ ներկայացնելով հայ և օտարերկրյա տարբեր ճանաչված կոմպոզիտորների դասական ստեղծագործությունները:

**Համերգներ և երաժշտական այլ հաղորդումներ**

2020 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է «Մանկական Եվրատեսիլ» երգի մրցույթը (կորոնավիրուսի համավարակի հետևանքով «Եվրատեսիլ» երգի մրցույթը չեղարկվել է), «Գրեմմի» երաժշտական մրցանակաբաշխությունը, Վիեննայի ֆիլիարմոնիկ նվագախմբի հատուկ համերգները, հայ հեղինակավոր կոմպոզիտորներին և

երաժիշտներին նվիրված հոբելյանական տարբեր համերգներ, հայտնի օպերաներ, ինչպես նաև հայրենական ու միջազգային այլ երաժշտական հեղինակավոր իրադարձություններ:

**Զվարճալի - ժամանցային հաղորդումներ**

**«Պատրաստենք միասին»**

Հաղորդաշարը օր օրի զարմացնում է իր հեռուստադիտողին խոհանոցային նրբություններով և նոր բաղադրատոմսերով: Յուրաքանչյուր թողարկմանը հեղինակ Սարգիս Մկրտչյանն իր յուրահատուկ ոճով և հետաքրքիր մտահղացումներով պատրաստում է ինչպես ավանդական ուտեստներ հայկական և համաշխարհային խոհանոցներից, այնպես էլ իմպրովիզացիոն եղանակով ստեղծված կամ վերափոխված այլ ուտեստներ, որոնք արագ և հեշտ կարող է պատրաստել յուրաքանչյուրը:

**«Կապրենք կտեսնենք»**

Մեկը մյուսի տեսակետին հակասող չորս հաղորդավարներ հավաքվում են մեկ սեղանի շուրջ հասարակության մեջ ամենաքննարկվող բազում թեմաները տարբեր հյուրերի հետ քննարկելու, լուսաբանելու, տեղեկատվություն տրամադրելու համար: Հաղորդաշարի ընթացքում անցկացվում են հոգեբանական խաղեր, ցուցադրվում են ռեպորտաժներ: Վերջում հաղորդավարներն ամփոփում են օրվա թեման՝ առաջարկելով հետաքրքիր և օգտակար լուծումներ:

**Զվարճալի - ժամանցային այլ հաղորդումներ**

2020 թվականի ընթացքում Առաջին ալիքը հեռարձակել է նաև բրազիլական և ամերիկյան արտադրության զգալի դիտողականություն ապահովող բազմասերիանոց ֆիլմեր (Լավ բժիշկը, Նոր կյանք, Անձնուրաց սեր, Ցասում, Տիկին Պետքարտուղար և այլն):

**Հեռուստահաղորդումների հեռարձակում**

2020 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի և միջազգային ալիքի հաղորդումները շարունակվել են հեռարձակվել օրական 24 ժամ:

Առաջին ալիքի հեռարձակումը ՀՀ տարածքում և Արցախում իրականացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության միջոցով: Երևան քաղաքում իրականացվել է թվային հեռարձակում HD ձևաչափով, իսկ ՀՀ մարզերում և Արցախում իրականացվել է թվային հեռարձակում SD ձևաչափով:

2020 թվականին Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հեռարձակումն արտերկրում ապահովվել է Գլոբքասթ և Յութելսաթ ընկերությունների կողմից բաց ազդանշանով՝ Գալաքսի-19 և Հոթբըրդ-13C արբանյակների միջոցով, որոնց հեռարձակման

ընդհանուր տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մաս՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները, Հյուսիսային Ամերիկան և Հարավային Ամերիկայի հյուսիսային մասը:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում մալուխային կապուղիներով միջազգային ալիքը հեռարձակելու ուղղությամբ: Ֆրանսիայում մալուխային ցանցերով Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հաղորդումները հեռարձակվել են ֆրանսիական տարբեր ընկերությունների կողմից: ԱՄՆ-ում միջազգային ալիքը շարունակել է հեռարձակվել Վերայզոն ընկերության միջոցով, որը ոլորտի առաջատարներից է, ինչպես նաև մի շարք այլ՝ ինտերնետային լուծումներով մեծ տարածում ունեցող ընկերությունների միջոցով: Շարունակվել են աշխատանքները հեռուստաալիքի լսարանի ընդլայնման ուղղությամբ նաև ԱՊՀ երկրներում, հատկապես՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում, ինչպես նաև Վրաստանում, ինչի արդյունքում աճել են Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակման ծավալները:

Հանրային հեռուստաընկերության միջազգային հեռուստաալիքը ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում և հարակից շրջաններում հասանելի է նաև թվային վերգետնյա չկոդավորված ալիքներով, ինչը հնարավորություն է տալիս այդ շրջաններում բնակվող ավելի քան կես միլիոն հայ բնակչությանն անվճար և դյուրին ձևով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի (www.1tv.am) միջոցով շարունակել է իրականացնել հեռարձակում իրական ժամանակում՝ հասանելի դարձնելով հաղորդումների համաժամանակյա դիտումը ամբողջ աշխարհում: Հանրային հեռուստաընկերության եթերին կարելի է հետևել ինչպես անհատական համակարգչով ու ինտերնետային հեռուստատեսությամբ, այնպես էլ բջջային հեռախոսներով և պլանշետներով (IPTV և OTT)՝ IOS և Android համակարգերի համար մշակված անվճար բջջային հավելվածների միջոցով: www.1tv.am ինտերնետային կայքում համաժամանակյա հեռարձակումը ապահովելու նպատակով LiveStreamCDN ամերիկյան կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում հնարավոր է դարձել աշխարհի գրեթե բոլոր անկյուններ հասցնել որակյալ և չընդհատվող թվային ազդանշան:

Առավել կայուն առցանց հեռարձակում ունենալու արդյունքում տարեցտարի աճում է կայքով և բջջային հավելվածներով համաժամանակյա դիտումների քանակը և ընդհանուր դիտելիության մակարդակը: Հանրային հեռուստաընկերության պաշտոնական վեբ կայքում հասանելի են եթերում հեռարձակված բոլոր հաղորդումները՝ հեղինակային և հեռարձակման իրավունքների խիստ պաշտպանությամբ:

2019 թվականի սեպտեմբերից գործարկվել է Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության նոր պաշտոնական առցանց կայքը, որի շնորհիվ օպերատիվ ու հավաստի տեղեկատվությունը հասանելի է դառնում հանրությանը: Տարեց տարի ավելանում է կայքի այցելուների քանակը՝ ապահովելով կայքում տեղադրված տեղեկատվության դիտելիության զգալի մակարդակ: Տեղեկատվությունը և առցանց լրատվական հաղորդումները հեռարձակվում են նաև սոցիալական կայքերում, ինչը հնարավորություն է ընձեռում սոցցանցերի օգտատերերին ևս հաղորդակից լինել Հանրային հեռուստաընկերության ստեղծած բովանդակությանը:

2019 թվականին ստեղծվել է Հանրային հեռուստաընկերության առցանց լրատվական կայքը՝ www.1lurer.am հասցեով: Գործարկման առաջին ամսվա ընթացքում կայքն արձանագրել է բարձր դիտելիություն: Առաջին ամիսներին, ըստ Alexa վերլուծական համակարգի, Հայաստանում գտնվել է 73-րդ տեղում: www.1lurer.am կայքում գրանցվում են այցելություններ աշխարհի գրեթե բոլոր մայրցամաքներից: Հատկապես Արցախյան երկրորդ պատերազմի առաջին 7 օրերին կայքում այցելությունների քանակը գերազանցել 1 միլիոնը (սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը՝ 1 240 478 այցելու): Շեշտակի ակտիվացել են նաև կայքում անգլերեն և ռուսերեն բաժինների դիտողականությունները (ռուսերեն բաժինը գործարկվել է Արցախյան պատերազմի առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին): Ըստ Alexa վերլուծական համակարգի 2021 թվականի փետրվար ամսվա դրությամբ www.1lurer.am կայքը Հայաստանում զբաղեցրել է 33-րդ տեղը: Միջինում ամսական կտրվածքով այս կայքը այցելում են ավելի քան 500 000 օգտատերեր, և այցելությունների աշխարհագրությունը գնալով ընդլայնվում է: Միջազգային հանրապետական ինստիտուտի պատվերով (International Republican Institute (IRI)) Breavis ընկերության կողմից ՀՀ տարածքում իրականացված հարցման արդյունքներով Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքը քաղաքական տեղեկատվություն ստանալու համար համարվում է 1-ին հարթակը:




Բացի այդ, հաշվետվության տվյալներով տարբեր կրթության մակարդակ ունեցող բոլոր տարիքային խմբերի համար թե՛ Երևանում և թե՛ հանրապետության ողջ տարածքում Հանրայինի Առաջին ալիքը հանդիսանում է տեղեկատվություն ստանալու համար ամենավստահելի աղբյուրը:



**Ֆինանսատնտեսական գործունեություն**

Հանրային հեռուստաընկերությունը 2020 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից հեռուստատեսային ծառայությունների մատուցման դիմաց ստացված գումարի և կապիտալ դրամաշնորհի, առևտրային և սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ընթացքում հովանավորչությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման, նպատակով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 11002 «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ Հանրային հեռուստաընկերությանը նախատեսվել է հատկացնել 6 056 595.7 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկը (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով): Սակայն, երկրում տիրող պատերազմական իրավիճակով պայմանավորված, ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 13-ի N 1794-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին է ուղղվել 300 000 հազ դրամ, ինչը հնարավոր եղավ իրականացնել 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի հետևանքով նկարահանումների ծավալների կրճատման, ինչպես նաև պատերազմի ընթացքում զվարճալի, ժամանցային և երաժշտական հաղորդումների կրճատման արդյունքում: Արդյունքում, 2020 թվականին 11002 «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ Հանրային հեռուստաընկերությանը փաստացի հատկացվել է 5 756 595.7 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը: Բացի այդ, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 32002 «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառմամբ Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 100 000 հազ.դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության կողմից 2020 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

**Աղյուսակ 4**

**2020 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների**

**(հազ. դրամ)**

| Հ/Հ | Եկամտի տեսակ | Գումար |
|---|---|---|
| 1 | Հիմնական գործունեությունից ՀՀ պետական բյուջեից եկամուտ | 4 797 163 |
| 2 | Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ | 1 157 726 |
| 3 | Առևտրային եկամուտներ, այդ թվում՝ | 205 797 |
| *3.1* | *Առևտրային և սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հաղորդումների հովանավորչությունից* | *128 510* |
| *3.2* | *Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտ* | *47 091* |
| *3.3* | *Հեռարձակումից և վերահեռարձակումից եկամուտ* | *28 956* |
| *3.4* | *Այլ առևտրային եկամուտ* | *1 240* |
| 4 | Այլ եկամուտ | 21 064 |
| **Ընդամենը** | | **6 181 750** |

Աղյուսակ 4-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից ստացված կապիտալ դրամաշնորհի հաշվին ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2020 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը:

Աղյուսակ 5-ում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2020 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

**Աղյուսակ 5**

**2020 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների**

**(հազ. դրամ)**

| Հ/Հ | Ծախսային ուղղություններ | Գումար |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ | 2 174 681 |
| 2 | Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր | 1 182 095 |
| 3 | Հեռարձակման ծախսեր | 263 658 |
| 4 | Մաշվածք և ամորտիզացիա | 1 389 985 |
| 5 | Այլ ծախսեր | 481 279 |
| **Ընդամենը** | | **5 491 698** |

Աշխատավարձերի, հավելավճարների և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 39.6%-ը և ներառել են հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, մարզային և արտերկրի թղթակիցների վարձատրության, հավելավճարների ու պարգևատրման, ինչպես նաև լրատվական առցանց կայքի կազմակերպման գծով պայմանագրային հիմունքներով ներգրավված անձանց վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 21.5%-ը և ներառել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների, ֆիլմերի և տարբեր նշանակալի սպորտային ու մշակութային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, հաղորդումների ստեղծագործական խմբերի և կրկնօրինակման ծառայությունների վարձատրության, տաղավարների ձևավորման դեկորացիաների ձեռքբերման և հաղորդումների արտադրության այլ ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 4.8%-ը և ներառել են թվային, արբանյակային և առցանց ինտերնետային կապուղիներով հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 25.3%-ը և ներառել են շենքերի և շինությունների, ինչպես նաև այլ հիմնական միջոցների և արտադրական նշանակության ծրագրային միջոցների ամորտիզացիայի ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 8.8%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, ներկայացուցչական, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով ծախսը և հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը), ինչպես նաև ֆինանսական և փոխարժեքային տարբերությունից զուտ ծախսերը:

Այսպիսով, 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթը կազմել է 690 052 հազ.դրամ:

2020 թվականի գործունեության ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարել 1 675 108 հազ.դրամ:

2019 թվականի գործունեության արդյունքներով Հանրային հեռուստաընկերությունը 2020 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարել 238 292 հազ.դրամ շահութաբաժին:

Հանրային հեռուստաընկերությունը 2020 թվականի ընթացքում ձեռք է բերել 114 351 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ տեխնիկական սարքավորումներ և արտադրատնտեսական գույք, մասնավորապես՝ հեռուստատեսային և համակարգչային տեխնիկա, հեռուստատեսային տեխնիկայի ծրագրային լիցենզիաներ, արտադրատնտեսական գույք և այլն, որից 100 000 հազ.դրամը ֆինանսավորվել է 2020 թվականին ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցների հաշվին: Բացի այդ, Հանային հեռուստաընկերությունը անհատույց ստացել է 19 134 հազ.դրամի տաղավարային հեռուստատեսային սարքավորումներ MSI ամերիկյան ընկերությունից դրամաշնորհային ծրագրի շրջանակներում և 6 945 հազ դրամի հեռուստատեսային սարքավորումներ՝ Եվրոպական հեռարձակողների միությանը անդամակցելու շրջանակներում:

## 2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2020 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը կատարել է ռադիոհաղորդումների արտադրության ու հեռարձակման իր առաքելությունը՝ օրական հեռարձակելով հաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» ռադիոալիք՝ 24 ժամ, «Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)՝ 24 ժամ, «Արևիկ» մայրաքաղաքային ալիք՝ 24 ժամ, «Հոգևոր-մշակութային» ռադիոալիք («ռադիո ՎԷՄ»)՝ 24 ժամ, արտասահմանի և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար պատրաստվող օտարալեզու հաղորդումները՝ օրական 2 ժամ 15 րոպե:

Հանրային ռադիոընկերության նպատակը եղել և մնում է հանրության սահմանադրական իրավունքի ապահովումը՝ հնարավորինս ընդգրկուն տեղեկություններ հաղորդելու քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ կենսական ոլորտների իրադարձությունների վերաբերյալ:

**Ռադիոհաղորդումների պատրաստում**

Հանրային ռադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում 2020 թվականի օգոստոսի 7-ից առաջնորդվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով (նախկինում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք), իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2020 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերությունը պատրաստել և հեռարձակել է ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

**Աղյուսակ 4**

**2020 թվականին Հանրային ռադիոընկերության ռադիոալիքների, ինչպես նաև հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների**

| Հ/Հ | Հաղորդումների թեմատիկ ուղղությունները | Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ) |
|---|---|---|
| **1** | **«Առաջին ծրագիր» ռադիոալիք** | **8 784.0** |
| 1.1 | Լրատվական, լրատվական-վերլուծական | 1 757.1 |
| 1.2 | Քաղաքական, տնտեսական, հասարակական | 2 348.7 |
| 1.3 | Մշակութային | 1 131.1 |
| 1.4 | Կրթական և հայոց լեզվի | 313.2 |
| 1.5 | Ժամանցային | 101.2 |
| 1.6 | Հոգևոր | 36.2 |
| 1.7 | Երաժշտական | 2 465.6 |
| 1.8 | Առողջապահական | 221.7 |
| 1,9 | Այլ | 409.2 |
| **2** | **«Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») ռադիոալիք** | **8 784.0** |
| **3** | **«Հոգևոր-Մշակութային» («Ռադիո ՎԷՄ») ռադիոալիք** | **8 784.0** |
| **4** | **ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում օտարալեզու հաղորդումներ** | **823.5** |
| **5** | **«Արևիկ» ռադիոալիք («Երրորդ ծրագիր»)** | **8 784.0** |

Հանրային ռադիոընկերության կողմից **«Առաջին ծրագիր»** ռադիոալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 3-ում:




**Գծապատկեր 3. 2020 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր» ռադիոալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)**

Հանրային ռադիոընկերությունը 2020 թվականին պատրաստել և հեռարձակել է բազմաժանր հաղորդումներ բոլոր տարիքային խմբերի ռադիոունկնդիրների համար: Ինչպես և նախկինում, հանրային կարևորության գրեթե բոլոր հարցերը մեկնաբանվել և քննարկվել են ռադիոեթերում: Լուսաբանվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող առավել ուշագրավ իրադարձությունները: Քաղաքական, տնտեսական, տարածաշրջանային և միջազգային իրադարձությունները վերլուծվել և բազմակողմանիորեն քննարկվել են տարբեր հաղորդումների շրջանակներում: Հանրային ռադիոն արտակարգ ռեժիմով աշխատել է հուլիսյան սահմանային սրացումների և սեպտեմբերյան արցախյան պատերազմի օրերին: Համավարակի պայմաններում իրականացվել են իրազեկման լայնածավալ աշխատանքներ: Լուսաբանվել է ՀՀ կառավարության և Ազգային ժողովի գործունեությունը: Գործարկվել է Մշակութային առցանց ալիքը:

Հանրային ռադիոընկերության կազմում գործում են երեք երաժշտական կոլեկտիվներ. Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը, «Սայաթ-Նովա»

աշուղական երգի անսամբլը, Էստրադային սիմֆոնիկ նվագախումբը «Արևիկ մանկապատանեկան անսամբլը», որտեղ այսօր ներգրավված է 6-13 տարեկան 30 երեխա:

**«Առաջին ծրագիր» ռադիոալիք**

**Լրատվական, լրատվական – վերլուծական հաղորդումներ**

**«Ռադիոլուր»** լրատվական-վերլուծականը համակողմանի լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող հրատապ և ուշագրավ իրադարձությունները: 2020 թվականի ընթացքում «Ռադիոլուր»-ը եթեր է հեռարձակվել երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան ժամը 8:00-ից մինչև 11:00-ն՝ «Առավոտյան տեղեկատվական ալիքի» շրջանակներում, որտեղ հնչել է նաև այլ տեղեկատվություն տարբեր ոլորտներից՝ առողջապահական, գիտական, տեխնոաշխարհի, ավտոաշխարհի և այլն: Այնուհետև 10 րոպեանոց թողարկումները հեռարձակվել են ժամը 12:00-ից մինչև 17:00-ն և ժամը 20:00-ին, 15 րոպե տևողությամբ թողարկումը՝ ժամը 15:00-ին, իսկ ժամը 18:00-ին հեռարձակվել է գլխավոր թողարկումը 56 րոպե տևողությամբ: Աշխատանքային օրերին ժամը 14:00-ի թողարկումը ներկայացվել է արևմտահայերենով: Շաբաթ օրերին հեռարձակվել է օրական երեք թողարկում՝ 10 րոպե տևողությամբ, իսկ գլխավոր թողարկումը՝ 30 րոպե տևողությամբ:

Հուլիս - օգոստոս ամիսներին և սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 27-ը Արցախյան պատերազմի օրերին և հետպատերազմյան շրջանում աշխատանքները իրականացվել են արտակարգ ռեժիմով, լուսաբանվել են Հայաստանում և տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները:

Լրահոսը հայերենով, ռուսերենով, անգլերենով, ադրբեջաներենով, թուրքերենով, վրացերենով, հունարենով, քրդերենով, եզդիերենով, ասորերենով, արաբերենով և պարսկերենով տեղադրվում է www.armradio.am կայքէջում:

Աշխատանքային օրերին ժամը 21:00-ին ռուսալեզու լսարանի համար հեռարձակվում է լրատվական-վերլուծական հաղորդում՝ 15 րոպե տևողությամբ:

«Ռադիոլուր»-ի շրջանակում ներկայացվում են մարզաշխարհի ամենակարևոր և հետաքրքիր իրադարձությունները, հայկական սպորտի զարգացման նախադրյալները և առկա խնդիրները:

2020 թվականին շարունակվել են հեռարձակվել ՀՀ պաշտպանության նախարարության **«Ասպար»** և ոստիկանության **«Ռադիո 02»** գերատեսչական լրատվական հաղորդաշարերը:

**Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ**

**«Ստատուս Քվո»** քաղաքական-վերլուծական հաղորդման հյուրերն են քաղաքական գործիչները, վերլուծաբանները, կառավարության տարբեր օղակներում աշխատող պետական այրերը, ԱԺ պատգամավորները:

**«Քո ձայնը»** հաղորդաշարը ուղղված է սոցիալական, աշխատանքային և հանրության տարբեր խավերին հուզող հարցերի բարձրաձայնմանն ու տաղավար հրավիրված ոլորտի պատասխանատուների հետ այդ հարցերի քննարկմանը:

**«Ռադիոլուրի հյուրասրահ»** հաղորդաշարի ընթացքում հյուրընկալվում են տարբեր գերատեսչությունների ղեկավարներ, ԱԺ պատգամավորներ, նախարարներ, վերլուծաբաններ և քաղաքագետներ, ովքեր քննարկում են տնտեսական, քաղաքական և սոցիալական բազմաթիվ հարցեր: Հաղորդաշարը եթեր է հեռարձակվել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ հունվարից սեպտեմբեր ամիսներին:

**«Քաղաքական շաբաթօրյակ»** վերլուծական հաղորդման դիտակետում տվյալ շաբաթվա տարածաշրջանային քաղաքական և տնտեսական կարևորագույն իրադարձություններն են:

**«Հաղթողը»** հաղորդում է իրենց ոլորտում հաջողության հասած մարդկանց մասին:

**«Կեսօրն անց»** հաղորդաշարը ներկայացվել է հետպատերազմյան շրջանում: Հաղորդաշարին հյուրընկալվել են մարդիկ, ովքեր ունեն մեր երկրում ամուր ապագա կառուցելու իրենց տեսլականը:

**«Համասփյուռք»** հաղորդման նպատակը աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայերին միմյանց հետ կապելն է: Հաղորդման ընթացքում քննարկվում են դրսում ապրող հայրենակիցների խնդիրները, հայապահպան մշակութային ծրագրերը:

**«Հաջողության նոտա»** հաղորդման հյուրերը տարբեր բնագավառներում հաջողության հասած մարդիկ են, ովքեր ներկայացնում են իրենց հաջողության պատմությունները, իրենց կյանքի և գործունեության ընթացքում կարևոր դեր ունեցած երգերը:

**«Անկախության պատմություն»** հաղորդումը վերհիշում և վերլուծում է անկախության առաջին տարիները, երբ կերտվում էր ՀՀ 3-րդ հանրապետության պետականությունը:

**«Ստարտափ Հայաստան»** հաղորդումը լուսաբանում է Հայաստանի տարբեր մարզերում ստարտափ նախագծերը:

«**Ժամանակի վկան**» հայագիտական հաղորդաշարն անդրադառնում է հայագիտության մեջ կարկառուն մարդկանց աշխատանքին:

**«Հատվող եթեր»** հաղորդաշարը անդրադարձ է հանրապետության տնտեսական, հասարակական, սոցիալական արդի հարցերին: Հաղորդման մասնակիցները ոլորտի հեղինակավոր մասնագետներն են:

**«Հայագիտակ»** հաղորդաշարն անդրադառնում է հայոց պատմության ցայտուն էջերին և դրանց կարևորությանը՝ այբուբենի ստեղծումից մինչև Դատաստանագիրք, Մովսես Խորենացու գործունեությունից մինչև Խրիմյան Հայրիկ:

**«Հայկական հարց»** հաղորդումների շարքն անդրադառնում է հայ պատմության այն էջերին, որտեղ հայապահպանությունը և գոյատևումը լուրջ կենսական խնդիր է եղել:

**«Մտքի ուժը»** հաղորդումը լուսաբանում է հայկական գիտական ոլորտը:

**«Ծովահայեր»** հաղորդաշարը պատմում է Հայաստանի ծովային պատմությունը, անդրադարձ է կատարվում Արևմտյան Հայաստանի չբացահայտված ստորջրյա պատմություններին:

**«Ապրելու բանաձև»** հաղորդաշարը Արցախյան և ապրիլյան պատերազմների մասնակիցների մասին է:

**«Էկոսֆերա»** հաղորդումն անդրադառնում է Հայաստանի էկոլոգիական հիմնահարցերին, միջոցառումներին, հասարակական կյանքում դրանց դերին ու նշանակությանը:

**«Գերդաստաններ»** հաղորդաշարը ներկայացնում է պատմություններ այնպիսի գերդաստանների մասին, որտեղ 2 կամ 3 սերնդի ներկայացուցիչներ մեծ դերակատարում են ունեցել պատմության, մշակույթի, բժշկության և այլ բնագավառներում:

**«Բիզնես բանաձև»** հաղորդումն անդրադառնում է հայ գործարարներին և նրանց գործունեության ընդլայնման հեռանկարներին, ներկայացնում է աշխարհում տեղի ունեցող տնտեսական, գործարար և բանկային ոլորտի նորամուծությունները:

**«Սփյուռքի ձայնը»** հաղորդաշարը լայնորեն լուսաբանում է սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունները: Սփյուռքում գործող հայկական ռադիոընկերություններից պարբերաբար ստացվող նյութերը ներկայացվում են հաղորդաշարի ընթացքում: Հաղորդման ընթացքում ներկայացվում են նաև հայրենադարձության պատմություններ:

**«Մտքերի խաչմերուկ»** հաղորդման բանախոսները իրենց ոլորտում հայտնի մասնագետներ կամ գործարարներ են, ովքեր պարզաբանում են հասարակական

երևույթների դերը քաղաքացու կյանքում, տալիս խորհուրդներ և առաջարկում լուծումներ գործարար ոլորտում: Հաղորդումը հեռարձակվել է հունվար - հուլիս ամիսներին:

**«Տարածաշրջան»** հաղորդումն ամփոփում է տվյալ շաբաթվա տարածարջանային անցուդարձը և դրանց ազդեցությունը Հայաստանի վրա:

**«Ձեր փաստաբանը»** հաղորդումն անդրադառնում է իրավական ոլորտի հետ ՀՀ քաղաքացիների առնչությանը, իրավական փաստաթղթերի, օրենքների, իրավական ակտերի և նորմերի մեկնաբանությանը:

**«Մասնագիտություն»** հաղորդման ընթացքում ներկայացվում է որևէ մասնագիտություն, որի նրբությունների և առանձնահատկությունների մասին խոսում են տվյալ ոլորտի ներկայացուցիչները:

**«Հայաստանը մեր տունն է»** հաղորդումը լուսաբանում է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքն ու նախասիրությունները:

**«Արևմտահայերեն հաղորդումներ»** հաղորդաշարը արևմտահայերենով ներկայացնում է Սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունները:

**<u>Մշակութային հաղորդումներ</u>**

**«Վերնատուն»** հաղորդումն ամփոփում է մշակութային կյանքը և դրա դրսևորումները:

**«Կինո նոն գրատա»** հաղորդումն այն ֆիլմերի մասին է, որոնց ցուցադրումները տարբեր պատճառներով արգելվել են, կամ դրանք գրաքննվել և դուրս են մնացել կինոյի պատմության էջերից:

**«Պոեզիա»** հաղորդման եթերաժամի ընթացքում Սիլվա Յուզբաշյանը ընթերցում է համաշխարհային և հայկական պոեզիա:

**«15 րոպեն քիչ է»** հաղորդումն այն մարդկանց մասին է, առանց որոնց հայ երաժշտությունն ու մշակութային կյանքը չէին լինի այսքան հարուստ ու բազմերանգ: Հաղորդման ընթացքում հնչում են Հանրային ռադիոյի ձայնադարանի ստեղծագործություններից հատվածներ:

**«Խճանկար»** հաղորդաշարը մարզերի մշակութային և հասարակական կյանքի մասին է:

**«Ազգային արժեքներ»** հաղորդումը հայ ազգի պատմության առանցքային դեմքերի և դեպքերի մասին է, որոնց ժողովուրդը ընկալում է որպես ազգային արժեք:

**«Բլից արտ»** հաղորդումը հեռարձակվել է հունվար-ապրիլ ամիսներին և անդրադարձել է հայ մշակութային աշխարհում տվյալ շաբաթ տեղի ունեցած և սպասվելիք իրադարձություններին:

**«Գիրք ճանապարհի»** հաղորդումը ներկայացնում է նյութեր, պատմվածքներ, նամակներ, մեմուարներ, որոնք գրվել են նշանավոր մարդկանց կողմից:

**«Մեր ձայնադարանի ֆոնդից»** հաղորդման ընթացքում եթեր են հեռարձակվում Հանրային ռադիոյի Ոսկե ֆոնդում պահպանվող գրական ժառանգություն հանդիսացող ձայնագրությունները, և դրանց մասին են պատմում ձայնագրությունների մասնակիցները և ականատեսները:

**«Բարձր գրականություն»** հաղորդման ընթացքում հեղինակը և հյուրը քննարկում են մեկ գիրք, փոխանակում կարծիքներ և ներկայացնում անձնական տեսակետներ գրքի ընկալման մասին:

**«Ռադիոթատրոն»**. 2020 թվականին Հանրային ռադիոընկերության եթերում շարունակվել են հեռարձակվել Հանրային ռադիոյի ձայնադարանում պահպանվող ռադիոթատրոնները:

**<u>Երաժշտական հաղորդումներ</u>**

**«Երաժշտական առավոտ»** հաղորդման ընթացքում ուղիղ եթերում երգիչ-երգչուհիները, երաժշտախմբերը կենդանի կատարմամբ ներկայացնում են հին և նոր ստեղծագործություններ:

**«Իմ երգը»** հաղորդումը կարևոր դերակատարում ունեցող երգերի մասին է:

**«Արմատներ»** հաղորդումը ներկայացնում է հայկական ավանդույթները և ծեսերը, դրանց ծագման պատմություններն ու կիրառման գաղափարները:

**«Դասական երաժշտությունը և մենք»** հաղորդումը մատուցում է դասական երաժշտություն, բացատրում և ներկայացնում դրա կարևորությունը:

**«Ռետրո ակումբ»** հաղորդման ընթացքում անդրադարձ է կատարվում համաշխարհային ռետրո երաժշտությանը, սիրված կատարումներին:

**«Մ-զոն»** հաղորդումը ներկայացնում է շաբաթվա երաժշտական իրադարձությունները: Հաղորդման ընթացքում նաև ներկայացվում են նոր թողարկված ձայնասկավառակները:

**«Երաժշտական եռանկյունի»** հաղորդումը յուրահատուկ ձևաչափ է հանդիսացել երաժշտագետներին և այլ հայտնի մարդկանց երաժշտական նախասիրությունները ներկայացնելու համար:

**Կրթական և հայոց լեզվի հաղորդումներ**

**«Դպրություն»** հաղորդումն անդրադառնում է հանրակրթական դպրոցին, դրա առօրյային, կրթական և արտադասարանային ծրագրերին:

**«Մենք և մեր բառերը»** հաղորդման շրջանակներում քննության առարկան հայերենն է՝ որպես խոսակցական, գրական, թարգմանչական լեզու: Հաղորդումը ուսումնասիրում է բառերի ծագումնաբանությունը, ներկայացնում ասացվածքներ և դրանց փոխարժեքները այլ լեզուներում, վերլուծում տարբեր լեզուներով դրանց ընկալման տարբերությունները:

**«Խոսենք հայերեն»** հաղորդման ընթացքում քննարկվում են խոսակցական հայերենում կիրառություն գտած ոճաբանական սխալները, և հիմնավորումներով ներկայացվում ճիշտ տարբերակները:

**«Մոր և մանկան անկյուն»** հաղորդաշարը անդրադառնում է ծնող-երեխա հարաբերություններին, առկա խնդիրների երկկողմանի հաղթահարմանը:

**Ժամանցային հաղորդումներ**

**«Տաղանդների տաղավար»** հաղորդումը նոր տաղանդների բացահայտման հարթակ է՝ երգիչների, նվագողների, բանաստեղծների և այլն:

**Առողջապահական հաղորդում**

**«Ես առողջ եմ»** հաղորդաշարը հանդիսանում է ոլորտի մասնագետի և ՀՀ քաղաքացու միջև կապօղակ, որով ռադիոլսողները ձեռք են բերում գիտելիք և ստանում խորհրդատվություններ:

**Հոգևոր հաղորդումներ**

**«Ավետիս»**, **«Շողակն Արարատյան»**, **«Մանանա»** հոգևոր հաղորդումները պատրաստվում են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի հետ համագործակցությամբ: Հաղորդումների գլխավոր նպատակն է ծանոթացնել հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական ծեսերին և տոնակատարություններին: Ռադիոունկնդիրները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու հոգևոր կյանքին ու խոսքին: Հոգևոր հաղորդումներին մասնակցում են հոգևորականներ, հոգեբաններ և ազգագրագետներ:

**«Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)**

Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր» ռադիոալիքը («Իմ ռադիո»-ն) մատուցում է բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, կրթական, ճանաչողական և հասարակական բնույթի ծրագրեր երիտասարդների համար: Եթերում

ներկայացվում են հայ և օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները, լուսաբանվում երիտասարդների գործունեությունը տարբեր ոլորտներում, ներկայացվում ոչ քաղաքական լրատվություն:

**«Իմ ռադիոլուր»**-ը ներկայացնում է կարճ լրատվություն բոլոր իրադարձություններից, բացի քաղաքականից:

**«IT շաբաթ»** հաղորդաշարը ներկայացնում է լուրեր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտից:

**«Ծանրութեթև»** հաղորդումը ներկայացնում է սոցիալական աջակցության ծրագրերը:

**«Իմացիր»** հաղորդաշարը պատմում է երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և ծրագրերի մասին:

**«Կյանքը՝ կարանտին»** հաղորդաշարը մարտ - ապրիլ ամիսներին անդրադարձել է համավարակի պատճառով ձևափոխված կյանքին:

**«Առցանց միջոցառումներ»** տեղեկատվական հարթակը ներկայացնում է, թե ինչպիսի միջոցառումների կարելի է հետևել առցանց հարթակում:

**«Օգտակար տեղեկություն»** հաղորդաշարը հետաքրքիր և օգտակար խորհուրդներ պարունակող կարճ հաղորդումների շարք է:

**«Վեր կաց»**-ը յուրահատուկ զբաղմունքի տեր մարդկանց կենցաղի մասին պատմող հաղորդաշար է, որն անդրադառնում է քիչ տարածված մասնագիտություններին:

**«Խոսենք հայերեն»** հաղորդման ընթացքում քննարկվում են խոսակցական հայերենում կիրառություն գտած ոճաբանական սխալները, և հիմնավորումներով ներկայացվում ճիշտ տարբերակները:

**«Էթիկետ»** հաղորդաշարը կարճ ներկայացնում է ամենատարբեր իրավիճակների համար էթիկայի կանոնները:

**«Լինել մասնագետ»** հաղորդաշարը ներկայացնում է տարբեր մասնագիտություններ ու դրանց առանձնահատկությունները:

**«Երեկոն Իմ ռադիոյում»**-ը հաղորդումների շարք է, որտեղ տարբեր ձևաչափերով կազմակերպվում են տարբեր հաղորդումներ՝ թատրոն - կարանտին, երաժշտական ռինգ և առցանց համերգ:

**«Բիթրեյթ»** հաղորդումը պատմում է համաշխարհային աստղերի թողարկած նոր ալբոմների մասին:

**«Իմ օրը»** խորհուրդ է տալիս, թե ինչպես առավել արդյունավետ անցկացնել հանգստյան օրերը:

**«Հեշթեգ»** հաղորդաշարը մայիս-հունիս ամիսներին ներկայացնում էր նորություններ նորաձևության, երաժշտության և այլ ժամանցային իրադարձությունների մասին:

**«Իմ օրինակը»** հաղորդաշարը ներկայացնում է երիտասարդների հաջողված պատմությունները:

**«Զեմպիոնական նախավարժանք»** հաղորդումը հունվար-ապրիլ ամիսներին պատմում էր, թե ինչպիսին է մարզիկների առօրյան և ինչ նախավարժանքով է այն սկսում:

**«Կարճ ասած»** հաղորդաշարը ներկայացնում է պատմություններ այն մարդկանց մասին, ում կյանքի ընթացքը էականորեն փոխվել է հենց համավարակով պայմանավորված:

**«Կարդա»** շարքի միջոցով տարբեր ոլորտի մարդիկ խորհուրդ են տալիս ինչ կարդալ:

**«Դիտիր»** շարքի միջոցով տարբեր ոլորտի մարդիկ խորհուրդ են տալիս ինչ ֆիլմ դիտել:

**«Ընթերցումներ»** շարքի շրջանակում արվեստագետները կարդում ու քննարկում են պատերազմի ընթացքում գրված ստեղծագործությունները:

**«Արևիկ» ռադիոալիք («Երրորդ ծրագիր»)**

Մայրաքաղաքային սփոման մանկապատանեկան այս ալիքի հեռարձակումը մեկնարկել է 2020 թվականի հունվարի 13-ից: Հաղորդումների բազմազանությունը թույլ է տալիս ընդգրկել ռադիոլսողների լայն շրջանակ՝ երեխաներից մինչև ծնողներ:

**«Լուրեր ընտանիքի համար»**-ը լրատվական հաղորդում է, որն օրվա տարբեր ժամերին ներկայացնում է կարճ լրատվություն:

**«Զարթուցիչ»** հաղորդումը դպրոցականների համար է. ներկայացվում են ռեպորտաժներ կրթօջախներից, մանկական ստեղծագործական կենտրոններից, մարզադպրոցներից:

**«Կանաչ մոլորակ»** հաղորդաշարը ճանաչողական, ուսուցողական զրույցների շարք է բնության, բուսական և կենդանական աշխարհի մասին:

**«Հայկական էսքիզներ»** հաղորդաշարը ներկայացնում է զրույցներ Հայաստանի պատմամշակութային արժեքների, բնության հուշարձանների և բնաշխարհի առանձնահատկությունների մասին:

**«9.11»** հաղորդաշարը Արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետների մասնակցությամբ ներկայացնում է քննարկումներ տարերային աղետների և կենցաղում

հանդիպող վտանգների մասին: Փորձագետը բացատրում է, թե ինչպես և ինչու են առաջանում այդ երևույթները, ինչ վտանգներ կարող են լինել, և ինչպես կարելի է պաշտպանվել նման իրավիճակներում:

**«Անվտանգության գոտի»**-ն ուսուցողական հաղորդում է, որի ընթացքում փորձագետի հետ ներկայացվում են երթևեկության կանոնները և անդրադարձ է կատարվում հետիոտների և վարորդների վարքագծերին:

**«Նորարարներ»** հաղորդումն անդրադառնում է այն գյուտարարներին, որոնք հեղափոխություն են կատարում տեխնոաշխարհում և էական փոփոխություններ բերում կյանք:

**«Նկարում ենք մեկ Հայաստան»** հաղորդաշարի միջոցով Հայաստանի տարբեր մարզերի երեխաները պատմական, աշխարհագրական, ազգագրական տեղեկություններ են ներկայացնում իրենց բնակավայրի մասին:

**«Էկոակումբ»** հաղորդաշարը պատմում է, թե ինչպես են երեխաները մասնակցում էկոլոգիական հիմնախնդիրների լուծմանը, ինչ հարցեր են բարձրացնում: Հաղորդումը պարբերաբար անդրադառնում է էկոնախաձեռնություններին և մասնագետների օգնությամբ պարզաբանում դրանք:

**«Ռադիոլաբ»** հաղորդաշարը ներկայացնում է նորություններ, նախագծեր ու նախաձեռնություններ տեխնոլոգիաների ոլորտում:

**«Առողջության այբուբեն»**-ում ներկայացվում են օգտակար խորհուրդներ ու տեղեկություններ առողջ ապրելակերպի և առողջ լինելու համար:

**«Մարզանք ողջ օրվա համար»** հաղորդաշարի ընթացքում մարզիչ - մասնագետի կողմից ներկայացվում են ֆիզիկական վարժություններ և օգտակար խորհուրդներ:

**«Պստիկաշեն»**-ը հաղորդում է ամենափոքրերի համար. փոքրիկների մասնակցությամբ զրույցներ տարբեր թեմաների շուրջ, հանելուկներ, հեքիաթներ, հետաքրքրաշարժ մաթեմատիկա:

**«Ինչուիկների աշխարհում»** հաղորդաշարի ընթացքում փոքրիկ գիտունիկները գտնում են տարբեր հարցերի պատասխաններ:

**«Արևիկ-բարևիկ»**-ը ուսուցողական հաղորդաշար է, որն ուղեկցվում է Արևիկ վոկալ գործիքային խմբի երգերով:

**«Սովորում ենք սովորել»** հաղորդաշարի ընթացքում հրավիրված մասնագետները՝ ուսուցիչները, դասախոսները, կրթության փորձագետները, ներկայացնում են այսօրվա կրթական խնդիրները, խոսում են դժվարությունների մասին և ելքեր առաջարկում:

**«Սովորում ենք բնությունից»** հաղորդաշարի ընթացքում վերհիշվում է, թե ինչ է սովորեցնում բնությունը, և արդյոք մենք հետևում ենք բնության խորհուրդներին: Հաղորդումը վարում են կենսաբանները և բնապահպանները:

**«Մեկնարկ»** հաղորդաշարի շրջանակում ոլորտի մասնագետների և պատասխանատուների հետ կազմակերպվում են կրթական խնդիրների քննարկումներ:

**«Էնցիկլոմեդիա»** հաղորդաշարը մեդիագրագիտության դասընթաց է, որի ընթացքում ներկայացվում է, թե ինչ են կարդում, լսում ու փնտրում պատանիները համացանցում:

**«Հայրիկի դասերը»** հաղորդումն անդրադառնում է ծնողավարության կարևոր խնդիրներին՝ մեծերի և երեխաների փոխհարաբերություններին, հոգեբանական առանձնահատկություններին, երեխաների հետ ճիշտ շփվելու հմտություններին:

**«Ֆինանսական գրագիտություն»** հաղորդումը պատկերացում է տալիս դրամի ծախսի մասին, թե ինչպես կարելի է դրամ աշխատել ու կառավարել ծախսերը:

**«Հայթեք»** հաղորդումը տեխնոաշխարհի նորությունների, իրադարձությունների մասին է:

**«Մանկական ռադիոթատրոնի ժամ»**- հաղորդաշարի ընթացքում հնչում են ռադիոբեմադրություններ՝ հայ և համաշխարհային մանկագիրների և դրամատուրգների ստեղծագործությունների հիման վրա:

**«Հոպլյա հեքիաթ»**-ը փոքրերի և մեծերի համար ուսուցողական հաղորդաշար է:

**«Հին օրեր երգը»** խորագրի ներքո ներկայացվում են հաղորդումներ Հանրային ռադիոյի մանկապատանեկան հաղորդումների ֆոնդից:

**«Համեղ բրդուճ»** հաղորդումը խոհարարական գաղտնիքների և տարբեր կերակրատեսակների մասին է: Հաղորդաշարի ընթացքում հնչում են խորհուրդներ սկսնակ խոհարարների համար:

**«Ասա-ասեմ»**-ը ժամանցային հաղորդում է փոքրիկների համար, որի ընթացքում բացահայտվում է երեխաների մտքի ճկունությունը:

**«Փոքրիկ հեքիաթասացներ»** հաղորդման ընթացքում երեխաները հեքիաթներ են պատմում ու նշում, թե հեքիաթն իրենց ինչ սովորեցրեց:

**«Առավոտյան զանգակներ»** հաղորդաշարի ընթացքում հնչում են հումորային պատումներ՝ դպրոցականների կյանքից ու առօրյայից:

**«Ռադիոարվեստանոց»** հաղորդաշարի ընթացքում ներկայացվում են ռադիոակնարկներ արվեստագետների, ստեղծագործող երեխաների և պատանիների մասին:

**«Առավոտյան բլբլիկ»** հաղորդումների շարքում հնչում են մանկական մտքեր և զրույցներ:

**«Հոգևոր-մշակութային» ռադիոալիք («Ռադիո ՎԷՄ»)**

Երևան քաղաքում և հարակից շրջաններում եթեր է հեռարձակվել «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքը: Ռադիոալիքի եթերով հեռարձակվել են հոգևոր-մշակութային և կրթական հաղորդումներ և հայ ու համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծագործություններ: Մասնավորապես, հեռարձակվել են հետևյալ հոգևոր-մշակութային հաղորդումները՝ «Գրական ընտրանի», «Արվեստի երանգներ», «Երաժշտական թատրոնի գոհարներ», «Համաշխարհային դասական երաժշտություն», «Հեքիաթի ժամ», «Գանձասար ռադիոհանդես, աստվածաշնչյան ընթերցումներ և համառոտ վարք սրբոց», «Գանձասար ռադիոհանդես, ընթերցումներ Եկեղեցու հայրերի գործերից», «Հոգևոր զրույցներ», «Մատյան ողբերգության», «ՎԷՄ-ի արխիվային հաղորդումներ», «Մտորումներ», «Հայկական վանքեր և սրբատեղիներ», «Սուրբ գրքի ներածություն», «Ոսկեփորիկ» և այլն:

**ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար պատրաստվող հաղորդումներ**

2020 թվականի ընթացքում ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների համար պատրաստվել և գերկարճ տիրույթի հաճախականությամբ «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերով հեռարձակվել են **«Երևանի ձայն»** ամենօրյա ռադիոհաղորդումները 4 լեզուներով՝ եզդիերեն, քրդերեն, ասորերեն և հունարեն: Մերձավոր Արևելքի և ՀՀ հարևան երկրների լսարանի համար պատրաստվել և միջին ալիքով հեռարձակվել են **«Երևանի ձայն»** ամենօրյա հաղորդումները 4 լեզվով (եզդիերեն, քրդերեն, ադրբեջաներեն և թուրքերեն): Հաղորդումները ներկայացրել են հայաստանյան իրադարձությունները, ծանոթացրել Հայաստանի պատմությանը, անդրադարձել Արցախի հիմնախնդրի կարգավորմանը, Հայ դատին և ցեղասպանության ճանաչմանը վերաբերող հարցերին: Հաղորդումների ձայնագրությունները և տեքստերը տեղադրվել են նաև www.armradio.info կայքէջում:

Աշխատանքային օրերին «Առաջին ծրագիր» ռադիոալիքի հիմնական եթերով աշխատանքային օրերին ժամը 21:00-ին ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար հեռարձակվել է օրվա լրահոսը:

**Մշակութային առցանց ալիք**

2020 թվականի հուլիսից գործարկվել է Մշակութային առցանց ալիքը, որը հասանելի է www.mshakuyt.armradio.am կայքէջում: Մշակութային առցանց ալիքով հեռարձակվել են 20-ից ավելի տեղեկատվական, կրթական և մշակութային հաղորդումներ, հնչել է ազգային և դասական երաժշտություն, ինչպես նաև հեռարձակվել են ձայնագրություններ Հանրային ռադիոյի ֆոնդից: 2020 թվականին շարունակվել են ֆոնդային ձայնագրությունների թվայնացման աշխատանքները: Հանրության հասանելի հարթակում՝ www.armradioarchive.am կայքում, հնարավոր է գտնել և լսել ձայնագրություններ, որոնք արվել են 1930 – 1990 թվականներին: Գործում է նաև բջջային հավելվածը:

**Ռադիոհաղորդումների հեռարձակում**

2020 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են սահմանված որակական և տեխնիկական չափանիշներին համապատասխան: «Առաջին ծրագիր» ռադիոալիքը հեռարձակվել է ՀՀ ողջ տարածքում օրական 24 ժամ՝ գերկարճ տիրույթի հաճախականություններով (Երևանում և հարակից շրջաններում ՝ 107.7 ՄՀց և 69.7 ՄՀց):

69.7 ՄՀց հաճախականությամբ «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերով հեռարձակվել են նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար նախատեսված ամենօրյա հաղորդումները 4 լեզուներով՝ եզդիերեն ու քրդերեն՝ 30 րոպե տևողությամբ և ասորերեն ու հունարեն՝ 15 րոպե տևողությամբ: Նույն հաճախականությամբ հեռարձակվող «Առաջին ծրագիր» ռադիոալիքի ուղիղ եթերով հեռարձակվել են նաև ՀՀ Ազգային ժողովի դռնբաց նիստերը: Ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար նախատեսված լրատվական ծրագիրը աշխատանքային օրերին ռուսերենով հեռարձակվել է 107.7 ՄՀց հաճախականությամբ՝ 15 րոպե տևողությամբ:

«Իմ ռադիո» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում, օրական 24 ժամ՝ 103.8 ՄՀց հաճախականությամբ:

«Արևիկ» մայրաքաղաքային սփռման ալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում, օրական 24 ժամ՝ 97.3 ՄՀց հաճախականությամբ:

«Հոգևոր-մշակութային» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում՝ օրական 24 ժամ՝ 91.1 ՄՀց հաճախականությամբ:

Մերձավոր Արևելքի և ՀՀ հարևան երկրների լսարանի համար պատրաստվել և միջին ալիքով 1395 կՀց հաճախականությամբ հեռարձակվել են օտարալեզու հաղորդումներ 4 լեզուներով (եզդիերեն, քրդերեն, ադրբեջաներեն՝ օրական 30 րոպե, և թուրքերեն՝ օրական 15 րոպե տևողությամբ): Մերձավոր Արևելքի և ՀՀ հարևան երկրների լսարանի համար միջին ալիքով հեռարձակվող հաղորդումները 4 լեզուներով հասանելի են նաև ՀՀ ամբողջ տարածքում:

Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» և «Ռադիո» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, ինչպես նաև Հանրային ռադիոընկերության սեփական տեխնիկական միջոցներով:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվում է նաև առցանց՝ www.armradio.am կայքէջով, «Երկրորդ ծրագիրը»՝ www.imradio.armradio.am կայքէջով, «Երրորդ ծրագիրը»՝ www.arevik.armradio.am կայքէջով, Մշակութային առցանց ալիքը՝ www.mshakuyt.armradio.am կայքէջով: www.armradio.am կայքէջի բովանդակությունը հասանելի է նաև անգլերենով, ռուսերենով, ադրբեջաներենով, թուրքերենով, վրացերենով, հունարենով, քրդերենով, եզդիերենով, արաբերենով ու պարսկերենով:

2020 թվականին ընդլայնվել է Հանրային ռադիոընկերության Առաջին և Երկրորդ ծրագրերի համաժամանակյա վիզուալ հաղորդումների ցուցադրումը սոցիալական ցանցերում, ինչը մեծացրել է ֆեյսբուքյան և այլ սոցիալական ցանցերում Ընկերության պաշտոնական էջերի այցելությունները:

**<u>Ֆինանսատնտեսական գործունեություն</u>**

Հանրային ռադիոընկերությունը 2020 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից ռադիո ծառայությունների մատուցման դիմաց ստացված գումարի, առևտրային գովազդից, եթերաժամանակի տրամադրումից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 11003 «Ռադիո ծառայություններ» միջոցառմամբ Հանրային ռադիոընկերությանը նախատեսվել է հատկացնել 962 106 հազ.դրամ, ներառյալ ԱԱՀ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով): Սակայն, երկրում տիրող

պատերազմական իրավիճակով պայմանավորված, ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N 1651-Ն և 2020 թվականի նոյեմբերի 13-ի N 1794-Ն որոշումներով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին է ուղղվել համապատասխանաբար 22 400 և 30 000 հազ.դրամ: Արդյունքում, 2020 թվականին Հանրային ռադիոընկերությանը փաստացի հատկացվել է 909 706 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության կողմից 2020 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

**Աղյուսակ 5**

**2020 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների**

**(հազ. դրամ)**

| **Հ/Հ** | **Եկամտի տեսակ** | **Գումար** |
|---|---|---|
| 1 | Հիմնական գործունեությունից ՀՀ պետական բյուջեից եկամուտ | 758 088 |
| 2 | Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ | 8 535 |
| 3 | Առևտրային եկամուտներ, այդ թվում՝ | 71 284 |
| *3.1* | *Առևտրային գովազդից եկամուտ* | *31 213* |
| *3.2* | *Վարձավճարներից եկամուտ* | *34 044* |
| *3.3* | *Երաժշտական ձայնագրման ծառայություններ* | *4 590* |
| *3.4* | *Հաղորդումների պատրաստում և հեռարձակում* | *1 437* |
| 4 | Ֆինանսական եկամուտներ | 11 162 |
| 5 | Այլ եկամուտ | 1 107 |
| **Ընդամենը** | | **850 176** |

Աղյուսակ 5-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված կապիտալ դրամաշնորհների միջոցներով ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2020 թվականին Հանրային ռադիոընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2020 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

**Աղյուսակ 6**

**2020 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների**

**(հազ. դրամ)**

| Հ/Հ | Ծախսային ուղղություններ | Գումար |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ | 628 216 |
| 2 | Հեռարձակման ծախսեր | 79 415 |
| 3 | Մաշվածք և ամորտիզացիա | 141 577 |
| 4 | Այլ ծախսեր | 45 255 |
| **Ընդամենը** | | **894 463** |

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 70.2%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 8.9%-ը և ներառել են ՀՀ տարածքում և արտասահմանում հեռարձակման, ինչպես նաև ինտերնետային առցանց հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 15.8%-ը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 5.1%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, աուդիտի, գործուղման ծախսերը, ինչպես նաև հարկերը և տուրքերը (ներառյալ հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը):

Այսպիսով, 2020 թվականին Հանրային ռադիոընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ վնասը կազմել է 44 287 հազ.դրամ:

2020 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 211 850 հազ.դրամ:

2019 թվականի գործունեության արդյունքներով Հանրային ռադիոընկերությունը 2020 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարել 20 540 հազ.դրամ շահութաբաժին:

2020 թվականին ձեռք են բերվել համակարգչային և հեռարձակման համար նախատեսված տեխնիկական միջոցներ, ձայնագրման տեխնիկական միջոցներ, գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ՝ 11 189 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ, և ոչ նյութական ակտիվներ՝ 20 259 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ:

## 3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2020 թվականին «Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և հեռարձակվել է օրական 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերության պատրաստած հաղորդումները ներկայացրել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը, երկրի մշակութային կյանքը՝ թիրախ ունենալով ազգային ու համամարդկային հոգևոր բարոյական արժեքների քարոզչությունը: Առանձին հաղորդումներով ու հաղորդաշարերով ներկայացվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ դերը հայկական մշակույթի, ազգային ավանդույթների ձևավորման, պահպանման ու հանրահռչակման գործում:

**Հեռուստահաղորդումների պատրաստում**

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում 2020 թվականի օգոստոսի 7-ից առաջնորդվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով (նախկինում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք), իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2020 թվականի ընթացքում Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակվել են 6 590 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

**Աղյուսակ 7**

**2020 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների**

| Հ/Հ | Հաղորդումների թեմատիկ ուղղությունները | Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ) |
|---|---|---|
| 1 | Մշակութային լրատվություն | 270 |
| 2 | Մշակութային հաղորդումներ | 1 970 |
| 3 | Հոգևոր հաղորդումներ | 903 |
| 4 | Երաժշտական ծրագրեր և համերգներ | 845 |
| 5 | Մանկական հաղորդումներ | 922 |
| 6 | Ուսումնական և այլ հաղորդումներ | 750 |
| 7 | Գիտահանրամատչելի, ուսումնական, վավերագրական կինոնկարներ | 930 |
| **Ընդամենը** | | **6 590** |

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 4-ում:




**Գծապատկեր 4. Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները (%) ըստ գծապատկերի.**

**Մշակութային լրատվություն**

Մշակութային լրատվության հաղորդումներից **«Մշակութային ազդագիր»** և **«Ձայնագիր»** հաղորդաշարերը պատրաստվել և հեռարձակվել են համապատասխանաբար մինչև մարտի 5-ը և մարտի 7-ը: Այնուհետև, կորոնավիրուսի համավարակի արդյունքում հայտարարված արտակարգ դրության ընթացքում այս հաղորդումների հեռարձակումը դադարել է: Մշակութային տարբեր միջոցառումների քանակի կտրուկ անկման պատճառով այս հաղորդաշարերը հեռարձակվել են առանձին լուրերի թողարկումներով: Ի տարբերություն նախորդ տարիների, 2020 թվականին լուսաբանվել է միայն Բրիտանական ֆիլմերի փառատոնը, քանի որ ավանդաբար հեռարձակվող մյուս բոլոր փառատոնները անցած տարի չեն կայացել:

Տարվա ընթացքում մշակութային լրատվական հաղորդումների փոխարեն պատրաստվել և հեռարձակվել են հայ և համաշխարհային մշակույթի երախտավորներին նվիրված առանձին հաղորդումներ՝ «Բակունցը և Զանգեզուրը», «Գուրգեն Մահարի. Այրվող այգեստաններ», «Գուրգեն Մահարի. Ծաղկած փշալարեր», «Կատարողն ու ստեղծագործողը», «Սերգեյ Սարաջյան», «Հարություն Փանոսյան», «Արամ Խաչատրյան», «Միքայել Թարիվերդիև», «Ռեդյարդ Քիպլինգ»:

**«Թեմա»** մշակութային թեմաներով տաղավարային հաղորդաշարը հեռարձակվել է մինչև փետրվարի 28-ը: Համավարակի պատճառով էականորեն դժվարացել էր հարցազրույցի նպատակով հյուր հրավիրելը և հաղորդաշարը վերափոխվեց «Զուգահեռ ընթերցումներ» անունով հաղորդաշարի: Նոր հաղորդաշարի երկու մշտական մասնակից՝ գրականագետներ Հայկ Համբարձումյանը և Արքմենիկ Նիկողոսյանը քննարկում են դասական ու ժամանակակից հայ գրականությունն ու համաշխարհային գրականության հայերենի արդի թարգմանությունները:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը համագործակցում է «Շողակաթ» հեռուստաընկերության հետ, որի պատրաստած հոգևոր-մշակութային և հոգևոր-եկեղեցական հաղորդումները համահունչ են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծրագրային քաղաքականությանը: 2020 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համագործակցության արդյունքում իր եթերով հեռարձակել է մի շարք հաղորդումներ, մասնավորապես՝

**<u>Մշակութային հաղորդումներ</u>**

- **«Գիրք ճանապարհի»** - հայ գրականության պատմության մեջ շրջադարձային արժեք ունեցող գրական գործերի մասին,
- **«Հանրագիտարան»** - հայ և համաշխարհային գիտության, արվեստի ու հասարակական կյանքի մեծերի մասին տեսահանրագիտարան,
- **«Կադրից դուրս»** - հայ և համաշխարհային կինոգործիչների մասին պատմող հաղորդաշար,
- **«Թանգարաններ»** - Հայաստանում գործող թանգարանները ներկայացնող հաղորդաշար,
- **«Հայտնի և անհայտ կինո»** - հանրահայտ ռեժիսորների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Նկարիչ»** - ժամանակակից հայ նկարիչների մասին պատմող ֆիլմ-հաղորդաշար,
- **«Փորձասենյակ»** - Հայաստանում գործող երաժշտական խմբերի մասին պատմող հաղորդաշար,
- **«Ներուժ»** - մանկապատանեկան ստեղծագործական կրթօջախների գործունեությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Երկու ընկեր»** - ժամանակակից հայ մտավորականները ներկայացնում են բարոյական այն արժեքները, որ կարևորում են մարդու մեջ, երբ ընկերանում են,
- **«Սիրելով... »** - մշակութային հաղորդաշար (սիրելով գիրքը, սիրելով պարը, սիրելով երաժշտությունը և այլն),
- **«Հանիրավի մոռացվածները»** - հայ մշակույթի մոռացված գործիչների մասին պատմող վավերագրական հեռուստաֆիլմ:

**<u>Հոգևոր հաղորդումներ</u>**

- **«Եկեղեցական կյանք»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կյանքում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանում,
- **«Հիսուսի հրաշքներն ու բժշկումները»** - անիմացիոն հաղորդաշար, որում հայ և եվրոպական մանրանկարչության միջոցով ներկայացվում են Նոր Կտակարանում նկարագրված Տերունական հրաշքները,
- **«Հարցեր քահանային»** - քահանան պատասխանում է հեռուստադիտողների հարցերին,

- **«Դեպի եկեղեցի»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալները վկայում են իրենց հավատքը, ներկայացնում իրենց փորձառությունը,
- **«Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդները»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծեսերի խորհուրդն ու մեկնությունը,
- **«Խորհուրդ խորին»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Պատարագի մեկնությունը,
- **«Հավատի կյանք»** - ուխտի օր ունեցող եկեղեցիների համայնքային կյանքը,
- **«Քրիստոնյայի օրագիր»** - պատմական աստեղային ու ճգնաժամային պահերին մեծանուն, կամ պարզ քրիստոնյայի օրագրային գրառումների հիման վրա նկարահանված տեսաֆիլմեր,
- **«Տոնացույց»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոներն ու դրանց խորհուրդը մեկնող հաղորդաշար:

**<u>Մանկական հաղորդումներ</u>**

- **«Հին ու նոր հեքիաթներ»** - անիմացիոն մանկական հաղորդաշար՝ իրիկնային հեքիաթ,
- **«Ճամփաներ»** - մանկապատանեկան կրթական, դաստիարակչական հաղորդաշար,
- **«Մանուկ դպիրներ»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում ծառայող մանուկներ, ովքեր են և ինչ արժեհամակարգում են մեծանում,
- **«Պատումիկներ Աստվածաշնչից»** - անիմացիոն հաղորդաշար, որը մանուկների համար ներկայացնում է Աստվածաշնչյան առանձին պատմություններ,
- **«Ինչն ինչոց է ըստ Պիստակի»** - մանկական անիմացիոն հանրագիտարան,
- **«ՕԳԳ»** - պատանեկան նախաձեռնություններ, որոնք օգուտ են բերում միջավայրին:

Արցախյան պատերազմից հետո հեռարձակվել է **«Երեխաներն ու պատերազմը»** հաղորդաշարը, որի նպատակն էր պատերազմ տեսած երեխաների ծնողներին օգնել հաղթահարելու այն հոգեբանական խնդիրները, որոնք կարող են առաջանալ երեխաների մոտ պատերազմի հետևանքով:

**<u>Ուսումնական և այլ հաղորդումներ</u>**

- **«Ազգապատում»** - Հայ ժողովրդի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Առաքինություններ»** - հաղորդաշարը ներկայացնում է բարոյական արժեքների դերը մարդու կյանքում,

- **«Նվիրյալ անձեր»** - հաղորդաշարը ներկայացնում է հայ ժամանակակից գիտության և մշակույթի երևելիների կյանքն ու գործունեությունը,
- **«Երրորդ հազարամյակ»** - հաղորդաշարում հասարակական գործիչներն ու գիտնականները քննարկում են մշակութաբանական թեմաներ,
- **«Դեպի տուն»** - հաղորդաշարում հայրենիք վերադարձած հայերը պատմում են իրենց գերդաստանի պատմությունը և խոսում հայրենիք վերադառնալու պատճառների մասին,
- **«Տաղավարում»** - տաղավարային հաղորդում է, որտեղ քննարկվում են կրթական հասարակական ինչեղություն ունեցող տարբեր հարցեր:

**<u>Հեռուստահաղորդումների հեռարձակում</u>**

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության հաղորդումները «Շողակաթ» հեռուստաալիքով հեռարձակվում են ՀՀ ամբողջ տարածքում: Հեռարձակումը իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

**<u>Ֆինանսատնտեսական գործունեություն</u>**

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2020 թվականին իր գործունեությունը իրականացրել է ՀՀ պետական բյուջեից հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների մատուցման դիմաց ստացված գումարի, իսկ օգոստոս ամսից, նաև առևտրային գովազդից ստացվող հասույթի հաշվին: Հոգևոր-մշակութային հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 11005 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 207 102.1 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը (առանց ԱԱՀ՝ 172 585.1) (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով):

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը այլ աղբյուրներից, մասնավորապես՝ առևտրային գովազդից և հովանավորչությունից ստացված դրամական մուտքերը կազմում են 1 201 հազ.դրամ:

2020 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պետական բյուջեից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Աղյուսակ 8-ում ներկայացված են Հոգևոր-մշակութային հանրային

հեռուստաընկերության 2020 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

**Աղյուսակ 8**

**2020 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների**

**(հազ.դրամ)**

| Հ/Հ | Ծախսային ուղղություններ | Գումար |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ | 79 639 |
| 2 | Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր | 32 918 |
| 3 | Հեռարձակման ծախսեր | 60 000 |
| 4 | Այլ ծախսեր | 1 229 |
| **Ընդամենը** | | **173 786** |

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 45.8%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռք բերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 18.9%-ը, հեռարձակման ծախսերը՝ 34.5%-ը, իսկ այլ ծախսերը՝ 0.7%-ը:

2020 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 43 574 հազ.դրամ:

2019 թվականի գործունեության արդյունքներով 2020 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարվել 37 հազ.դրամ շահութաբաժին: